ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ι/2018/1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան

13 02 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր՝ Անուբաղ Համբարյանի, ով գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Լուսանշան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Էդուարդ Հարությունյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ՀՀ կառավարության 8 հունիսի 2006 թվականի N 789-Ն,18 փետրվարի 2010 թվականի N 130-Ա որոշումներով կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված պետական գույքի պահպանման, կատարելագործման և 2018 թվականի 1-ին եռամսյակի աշխատանքային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել 123.000.000 (հարյուր քսաներեք միլիոն) ՀՀ դրամ գումար:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ) ներկայացված են Պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. որպես Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին, ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքը և համապատասխանությունը ստանդարտներին և տեխնիկական կանոնակարգերին՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանել թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ:

2.1.3. Միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե՝

ա. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին աշխատանքների իրականացման ժամկետները,

բ. իրականացված աշխատանքները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. փոփոխություններ կատարելու ծրագրի մեջ, կամ հանձնարարելու ծրագրով չնախատեսված աշխատանքներ՝ հետագայում ծրագրում փոփոխություն մտցնելու պայմանով:

2.1.5. Հանձնարարություն ներկայացնելու հեռախոսագրով (կամ կապի այլ միջոցներով) 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջադրանք ներկայացնելու պայմանով:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Պետական մարմնից պահանջել կատարելու Պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

2.2.2. Պետական մարմնի կողմից մեկամսյա ժամկետում գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը.

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագիրը ձևակերպել նախապես առաջարկված ցանկով ըստ ծրագրով նախատեսված ցուցանիշների՝ տարածքային բաշխմամբ:

2.3.2. ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում իր իրավասությունների սահմաններում աջակցել կազմակերպությանը

2.3.3 որպես Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին, իրականացված աշխատանքների մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված աշխատանքները համապատասխանում են Ծրագրի և Պայմանագրի պահանջներին, ապա դրանք հաստատվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. Պայմանագրով սահմանված կարգով պետական մարմնին, որպես Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմին, յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը ներկայացնել աշխատանքների իրականացման մասին եռամսյակային հաշվետվություն, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու՝ պետական մարմնի, որպես Կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի, հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. պետական մարմնի կողմից առանձին աշխատանքների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. պետական մարմնի կողմից առանձին աշխատանքների իրականացման մասին հաշվետվությունները ընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է սահմանված կարգով կատարել աշխատանքի արդյունքի կապիտալացում, հաշվեգրել հաշվեկշիռ՝ անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով.

2.4.7. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Վճարման նպատակով կազմակերպությունը մինչև յուրաքանչյուր ամսվա 5-ը ֆինանսավորման հայտ է ներկայացնում պետական մարմին:

4.2. Պետական մարմինը վճարումն իրականացնում է ֆինանսավորման հայտը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում մինչև 2018 թվականի մարտի 31-ը: Պայմանագրի գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրի N1 հավելվածով սահմանված է աշխատանքների ծրագիրը,իսկ N2 հավելվածով վճարման ժամանակացույցը, որոնք հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասերը:

8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3. Սույն պայմանագիրը կազմված է 6 /վեց/ էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ և մեկ օրինակ ՀՀ Ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչությանը:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները,բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝ Հայաստանի Հանրապետության ԿԱ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ «Լուսանշան» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Հասցեն՝ ք.Երևան, Նալբանդյան 130	Հասցեն՝ ք.Երևան, Սեբաստիա 7
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի Գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Արարատ Բանկ» ԲԲԸ
ՀՀ 90001315004 ՀՎՀՀ 01840082	ՀՀ 1510011882920100 ՀՎՀՀ 01840007
_____ Ա. ՀԱՄԲԱՐՅԱՆ	_____ Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
,,____,,_____2018թ.
№ L/2018/1 պայմանագրի

«Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից 2018թ. առաջին եռամսյակում նախատեսվող

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Հ/հ	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6	7
			Պահպանման ծախսեր			107000.0
1	Պահպանման ծախսեր այդ թվում՝	ՀՀ կառավարության 08.06.2006թ. №789-Ն և 18.02.2010թ. №130-Ա որոշումներով ամրացված գույքի շահագործման, կատարելագործման և պահպանման ծախսեր	Լամպերի փոխում, վթարված հանգույցների վերանորոգում, ժամանակների շտկում, տեսանելիության ապահովում: Ճանապարհային նշանների մաքրում, ուղղում, ամրացում: Շենքեր, շինությունների և մեխանիզմների ընթացիկ նորոգում և պահպանում	Լուսացույցային օբյեկտների աշխատանքի բարելավում	31.03.2018 թ.	107000.0
	Լուսացույցային օբյեկտների շահագործում և պահպանում	Երևան քաղաքի 251 լուս. օբյեկտներ	Լամպերի փոխում, վթարված հանգույցների վերանորոգում, ժամանակների շտկում, տեսանելիության ապահովում:	Լուսացույցային օբյեկտների աշխատանքի բարելավում	31.03.2018 թ.	
	Ճանապարհային նշանների շահագործում և պահպանում	Երևան քաղաքի 12453ճանապարհային նշաններ	Ճանապարհային նշանների ամրացում, բացակայողների և գունաթափվածների վերականգնում, մաքրում, տեսանելիության ապահովում	Երթևեկության անվտանգության բարելավում	31.03.2018 թ.	

			Պայմանագրային աշխատանքներ			16000.0
2	Երևան քաղաքի ճանապարհային նշանների պատրաստում և տեղադրում	220 հատ ճանապարհային նշանների , 5 հատ կանգառանշանների պատրաստում և տեղադրում, 2 հատ ուռուցիկ հայելու տեղադրում	Վթարված և նոր ճանապարհային նշանների տեղադրում	Երևան քաղաքում երթևեկության անվտանգության բարելավում	31.03.2018 թ.	6475.0
3	Ճանապարհային գծանշումների իրականացում	Երևան քաղաքում 50000 գծ/մ հորիզոնական գծանշում	Երևան քաղաքի փողոցներում հորիզոնական գծաշումների իրականացում	Երևան քաղաքում երթևեկության անվտանգության բարելավում	31.03.2018 թ.	8000.0
4	Երևան քաղաքի լուսացույցային օբյեկտների կառուցում	1 թարթող օբեկտների կառուցում	Հենասյունների, կառավարման սարքերի և ճանապարհային լուսացույցների կառուցում	Լուսացույցների տեսանելիության բարելավում սպասարկման ծախսերի կրճատում, երթևեկության անվտանգության բարելավում	31.03.2018 թ.	1525.0
			Ընդամենը՝			123000.0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր Հայաստանի
Հանրապետության ոստիկանություն
Հասցեն՝ ք.Երևան, Նալբանդյան 130
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի
Գործառնական վարչություն
Հ/հ 900013150041
ՀՎՀՀ 01840082

_____ Ա. ՀԱՍՐԱԹՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Լուսանշան» պետական ոչ առևտրային
կազմակերպություն

Հասցեն՝ ք.Երևան,Սեբաստիա փող.7
Սպասարկող բանկ՝ ԱրարատԲանկ՝՝ԲԲԸ
Հ/հ 15100118829201 00
ՀՎՀՀ 01840007

_____ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 2

Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց

. Հիմնարկի անվանումը ՀՀ ոստիկանություն

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

4. Գանձապետական բյուջետային կամ արտաբյուջետային հաշվի համարը 900013150041

...ժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
3	01	01	07	105019

...ագրի անվանումը ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ...նապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար ...ոչական տուգանքների գանձումների, գրանցման քննական ծառայությունների ...մաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների մատուցում

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018 թվականի պետական բյուջեից կամ արտաբյուջետային միջոցների հաշվին, ընդորում / հազ. դրամ/				
		1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	ընդամենը
1	2	3	4	5	6	7
...նթացիկ դրամաշնորհ	4637	123000,0	123000,0	123000,0	123000,0	123000,0
Ընդամենը՝		**123000,0**	**123000,0**	**123000,0**	**123000,0**	**123000,0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

Հասցեն՝ ք.Երևան, Նալբանդյան 130

Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի
Գործառնական վարչություն

ՀՀ 900013150041

ՀՎՀՀ 01840082

Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«ԼՈՒՍԱՆՇԱՆ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հասցեն՝ ք.Երևան, Սեբաստիա 7

Սպասարկող բանկ՝ «Արարատ Բանկ» ԲԲԸ

ՀՀ 1510011882920100

ՀՎՀՀ 01840007

Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

"Համաձայնեցված է"
"Լուսանշան" ՊՈԱԿ - ի
Տնօրեն Է. Հարությունյան
..... 2018 թ.

"Հաստատում եմ"
ՀՀԿԱ ոստիկանության պետի տեղակալ՝
ոստիկանության գեներալ-մայոր՝
Վ. Համբարյան
..... 2018 թ.

ԾՐԱԳԻՐ

«Լուսանշան» ՊՈԱԿ - ի կողմից 2018 թ. առաջին եռամսյակում կատարվելիք անվտանգ երթևեկության կարգավորման տեխնիկական միջոցների տեղադրման, վերազինման և գծանշման աշխատանքների

Հ/հ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	I եռամսյակի ծավալները	Աշխատանքի ծավալները ըստ ամիսների		
				հունվար	փետրվար	մարտ
1	2	3	4	5	6	7
1	Ճանապարհային նշանների պատրաստում և տեղադրում	հատ	220	50	100	70
2	Կանգառանշանի պատրաստում և տեղադրում /կանգնակով/	հատ	5	1	2	2
3	Ուռուցիկ հայելիների տեղադրում	հատ	2	0	1	1
4	Հորիզոնական գծանշում	գծ/մ	50000	0	30,000	20,000
5	Դեղին թարթող լուսացույցային օբյեկտի վերազինում /կառուցում/	օբ	1	0	1	0
6	Պահպանման, շահագործման և կատարելագործման ծախսեր	օբ	251 լուս. օբ. 12453 Ճ Նշ. 100 %	20 %	40 %	40 %

«Լուսանշան» ՊՈԱԿ - ի
Գլխավոր ճարտարագետ՝
Հ. Ստեփանյան

ՃՈ ՃԵԿՀ բաժնի պետ
ոստիկանության փոխգնդապետ՝
Գ. Կոստանյան